Տեղահանված խաչքարերի հավաք ծրագիր

ԱՂԲԵՐՔ

AGHBERK

Collection of Displaced Cross-Stones Project

UDC 725.94

Ծրագրի և գրքույկի հեղինակ **Ռաֆֆի Քորթոշյան**
Project and booklet author **Raffi Kortoshian**

Խմբագիր-սրբագրիչ **Հասմիկ Հովհաննիսյան**
Editor and proof-reader of the Armenian text **Hasmik Hovhannissian**

Անգլերենի թարգմանիչ **Գայանե Մովսիսյան**
English translator **Gayane Movsissian**

Համակարգչային ձևավորող **Արմեն Գևորգյան**
Computer designer **Armen Gevorgian**

Լուսանկարների մշակում **Լյուսի Ավետիսյան**
Photo proofing **Lucy Avetissian**

Ռաֆֆի Քորթոշյան
«Տեղահանված խաչքարերի հավաք» ծրագիր, Աղբերք գյուղ. / Ռ. Քորթոշյան.- Եր.: ՀՃՈՒ հիմնադրամ, 2019 - 16 էջ:

Raffi Kortoshian
Collection of Displaced Cross-Stones Project, Aghberk Village. / R. Kortoshian.- Yer.: RAA Foundation, 2019 - 16 pages:

http://www.armenianarchitecture.am
http://www.raa.am
RAA Armenia
raayer@sci.am
(37410) 52 15 25

ISBN 978-9939-843-47-6

© Ռաֆֆի Քորթոշյան (Raffi Kortoshian), 2019
© ՀՃՈՒ հիմնադրամ (RAA Foundation), 2019

ԱՂԲԵՐՔ ԳՅՈՒՂ
AGHBERK VILLAGE

Աղբերք գյուղը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ. մարտի 13)

Aghberk Village from the north-west (photo by R. Kortoshian, 13 March 2019)

Տեղադրություն. գտնվում է Գեղարքունիքի մարզի Արտանիշի թերակղզու հյուսիսում՝ Արեգունի լեռնաշղթայի հարավարևելյան կողմում՝ Սևանա լճից ուղիղ գծով մոտ 3 կմ հեռու՝ Դրախտիկ և Շորժա գյուղերի հարևանությամբ (ծովի մակերևույթից բարձր է 2120-2190 մ):

Անվանում. պատմական անունը մոռացվել է: ԺԹ դարի առաջին կեսերին այստեղ նստակեցության անցած քոչվորները գյուղը կոչել են մերձակա նշանավոր ստորերկրյա աղբյուրին իրենց իսկ կողմից տրված Աղբուլախ անվամբ, որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է սպիտակ աղբյուր: Վկայվել է նաև Ալբուլաղ և Աղպուլաղ անվանաձևերով: 1991 թ. պաշտոնապես վերանվանվել է Աղբերք[1]:

Պատմություն. գյուղի մասին գրավոր հին հիշատակություններ հայտնի չեն: Դա պայմանավորված կարող է լինել նրանով, որ խզվել է կապը բնակավայրի մոռացված բուն հայկական և վերջին 150 տարիների ընթացքում շրջանառվող անվան միջև: Համենայն դեպս, գրավոր աղբյուրներում Ալբուլաղ անվամբ առաջին անգամ հիշատակվում է ԺԹ դարի առաջին կեսերից, սակայն գյուղում պահպանված նյութական մշակույթի հուշարձանների մնացորդները վկայում են բնակավայրի գոյությունն առնվազն ուշ միջնադարից:

1 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 14:

Աղբերք գյուղն արևելքից (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ. մայիսի 15)

Aghberk Village from the east (photo by R. Kortoshian, 15 May 2019)

Location. Aghberk is situated north of Artanish Peninsula in Gegharkunik Region of the Republic of Armenia, south-east of the Areguni mountain range, within about 3 km of Lake Sevan in a straight line, near the villages of Drakhtik and Shorzha, at an altitude of 2,120 to 2,190 metres.

Name. The historical name of the village has fallen into oblivion. The nomads who took up a sedentary mode of life here in the first half of the 19th century called the village *Aghbulakh*, the name that they had already given to a well-known nearby spring: *aghbulakh* means *a white spring* as translated from Turkish. The village has also been mentioned as *Albulagh* and *Aghpulagh*. In 1991 it was officially renamed *Aghberk*.[1]

History. The old available records do not contain any reference to the village: this can perhaps be explained by the fact that the name that has been used in recent 150 years does not bear any reference to its original Armenian name. The earliest written mention of the village, by the name of *Albulagh*, dates back to the first half of the 19th century, while the remnants of the monuments of material culture preserved here prove that it has existed since at least the late Middle Ages.

1 Dictionary of Armenian Residences (Yerevan, 2008), p. 14.

Սևանա լիճն Աղբերքից, Արեգունի լեռնաշղթայի կենտրոնական հատվածը հարավ-արևմուտքից, Արտանիշի թերակղզին հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ռ. Քորքոշյանի, 2019 թ.)

Lake Sevan from Aghberk; the central part of the Areguni chain from the south-west, and Artanish Peninsula from the north-west (photos by R. Kortoshian, 2019)

Բնակչություն. ըստ պահպանված հայկական գերեզմանական հուշարձանների՝ Աղբերք գյուղը զուտ հայաբնակ է եղել մինչև ԺԷ-ԺԸ դդ. և, ամենայն հավանականությամբ, բնիկներից դատարկվել է 1604 թ. Շահ Աբասի բռնագաղթի և ԺԸ դարի լեզգիների արշավանքների հետևանքով:

Հետագայում՝ 1829-1830 թթ., գյուղում հաստատվում են Սարուխանից (Դալիղարդաշ) տեղափոխված մի քանի տուն թարաքամա թուրքեր[2] (վերջիններիս պատկանող գերեզմանոցում առկա արձանագիր քարերի հնագույնը կրում է հիջրի 1314 (1896-1897) թվականը):

Հայտնի էր, որ գյուղաբնակ թուրքերը ևս հետ չէին մնում իրենց ցեղին հատուկ ավա-

2 Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ, համապատասխան հատորով), հ. 1, կազմ.՝ **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ս.**, **Բարսեղյան Հ.**, Երևան, 1986, էջ 166: Առկա տեղեկությունների համաձայն՝ Սարուխան գյուղը հայաթափվել է ԺԸ դարում լեզգիների արշավանքի հետևանքով, ապա ԺԹ դարի սկզբներին Երևանի խանի ջանքերով բնակեցվել թարաքամա թուրքերով (hy.wikipedia.org/wiki/Սարուխան_(Գեղարքունիքի_մարզ)): Վերջիններս գյուղից հեռացել են 1828 թ., երբ այստեղ են սկսում վերաբնակվել Բայազետ գավառից գաղթած հայերը (ՀՀՇՏԲ, հ. 4, Երևան, 1998, էջ 546):

Population. Judging from the preserved Armenian tombstones, Aghberk was entirely populated by Armenians until the 17th to 18th centuries, most probably, being emptied of its natives in the aftermath of the deportation organised by Shah Abbas in 1604, and the Lezghin invasions of the 18th century.

Later, in 1829 to 1830, several families of Tarakama Turks[2] from Sarukhan (Dalighardash) took up residence in the village: the oldest inscribed tombstone of their cemetery dates from 1314 (1896 to 1897) of Hijrah.

These Turks were not at all different from their fellow tribesmen for whom banditry was a common lifestyle: they kept destroying and

2 Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories, vol. 1, compiled by **T. Hakobian**, **S. Melik-Bakhshian, H. Barseghian** (Yerevan, 1986), p. 166. According to the available records, Sarukhan Village was emptied of its Armenian inhabitants in consequence of the Lezghin invasions of the 18th century. In the early 19th century, it was re-populated by Tarakama Turks thanks to the efforts of the khan of Yerevan (hy.wikipedia.org/wiki/Սարուխան-(Գեղարքունիքի_մարզ). These Turks left the village in 1828, when Armenian refugees from Bayazet District started taking up residence here (Dictionary of Toponymy, vol. 4 (Yerevan, 1998), p. 546).

Աղբերք գյուղը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)
Aghberk Village from the north-east (photo by R. Kortoshian, 2019)

զակաբարո արարքներով. ավերում, թալանում, կողոպտում և սպանում էին շրջանի խաղաղ բնակչությանը, ինչպես նաև ոչնչացնում նրանց ստեղծած արժեքները: Դեռևս 1862-1863 թթ. շրջանում ուսումնասիրություններ կատարած Մ. Սմբատյանցն այդ ամենի մասին նշում է. «Ողորմելի թուրքերը ամեն տեղ կրօնամոլութիւնը ցոյց են տալի, փոխանակ ամաչելոյ՝ որ իրենք աղօթարան չունին, աշխատում են քրիստոնէից աղօթարաններն ջնջել անհետացնել...»[3]:

Իրավիճակը նույնն էր նաև Ի դարի սկզբին: Սևանի ավազանում թուրքերի՝ հաճախակի դարձած ավազակային հարձակումներին վերջ տալու նպատակով 1917 թ. ամռանը ռուսական բանակը որոշակի գործողություններ է ձեռնարկում: Այդ մասին «Մշակ» թերթում կարդում ենք. «...այս տարի նրանց թալանումներն ու կողոպուտը իրանց գագաթնակէտին հասան...: Զօրքի մի մասը ուղարկվեց Սևանի ծովակի արևելեան ափում ընկած մօլօկան գիւղում, Նադեժդինօ, որի մի բուռն ռուս աղանդաւոր բնակիչներին հարևան գիւղերի թուրքերը անհանգստացնում էին, քշելով նրանց ոչխարներն ու անասունները:

3 **Սմբատեանց Մ.**, Տեղագիր Գեղարքունիքի Ծովազարդ գաւառի, Էջմիածին, 1895, էջ 630:

plundering the villages of the neighbourhood, killing the peaceful inhabitants and ruining what they had built. M. Smbatiants, who carried out studies in this region between 1862 and 1863, wrote the following in this respect: “These despicable Turks keep showing their religious bigotry everywhere: instead of feeling ashamed for not having even a prayer-house, they are trying to destroy the places of Christian worship.”[3]

The situation was the same in the early 20th century. In order to put an end to the frequent Turkish raids in the Sevan basin, the Russian army took some actions in the summer of 1917. The newspaper *Mshak* wrote the following about this: “The plunder and robbery they [the Turks] have committed this year has been unprecedented.... Part of the troops were sent to the Molokan village of Nadezhdino, on the eastern shore of Lake Sevan: the local Russian sectarians, forming a very small number, were being harassed by the Turks of the neighbouring villages, their sheep and cattle being frequently captured. The Turks of Aghbulagh and Tokhluja met these troops with an armed resistance, during which

3 **M. Smbatiants**, “Topography of Tzovazard District of Gegharkunik,” *Echmiatzin*, 1895, p. 630.

Աղբերք գյուղը հյուսիսարևելյան լեռնագագաթից (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)
Aghberk Village from the north-eastern mountain peak (photo by R. Kortoshian, 2019)

Զօրքին զէնքով դիմադրել էին Աղբուլաղի և Թօխլուջայի թուրքերը, որի միջոցին աղբուլաղցիք սպանվածներ ունեցան, ուստի էկզէկուցիայի միջոցով ձերբակալվելով մի քանի թուրք երևելիներ՝ բաւարարվեցին ռուս գիւղացիք...»[4]:

Մեկ այլ դեպք էլ գրանցվել է 1918 թ. հունվարի 27-ին, որի մասին լրատվական հաղորդագրությունը նշում է. «Ալ-Բուլաղ գիւղի թուրք բնակիչները յարձակվեցին մօլոկանների Նադեժդինօ գիւղի վրա: Եօթերորդ օրն է պաշտպանվում ենք խրամատներում, թոյլ չը տալով մեզ կողոպտել: Սպանված է 1 մօլոկան, երկուսը անյայտ կորել են...»[5]:

Շուրջ 150 տարի գյուղում բնակություն հաստատած թարաքամա թուրքերը (1936 թ.-ից՝ ադրբեջանցի) Խորհրդային Միության վերջին տարիներին հեռանում են՝ 1988 թ. նոյեմբերին իրենց տները փոխանակելով Հյուսիսային Արցախի (այժմ՝ Ադրբեջանում) Շամխորի շրջանի Մարտունի գյուղից բռնագաղթված հայերի հետ: Ավելի ուշ՝ 1991 թ. մայիսին, այստեղ են հաստատվում նաև տեղահանված գետաշենցիները, իսկ 1992 թ. օգոստոսին՝ արծվաշենցիները, ինչպես նաև բաք-

4 **Ընտրդ.** Անարխիան շարունակվում է, «Մշակ», 1917, № 194, 14 սեպտեմբերի, էջ 3:
5 «Մշակ», 1918, № 21, 30 յունվարի, էջ 2:

the people of Aghbulagh suffered some losses. Several outstanding Turks were arrested..., this giving a feeling of satisfaction to the Russian peasants."[4]

Another such incident took place on 27 January 1918, a press publication stating the following about it: "The Molokan-inhabited village of Nadezhdino has been attacked by the Turkish inhabitants of Al-Bulagh Village. We have been defending ourselves in trenches for already seven days not to allow them to rob us. A Molokan has been killed, and two others have gone missing."[5]

The Tarakama Turks (called Azerbaijanians since 1936) who had been living in Aghberk for over 150 years left the village just on the eve of the collapse of the Soviet Union, in November 1988, exchanging houses with the Armenian refugees who had been deported from Martuni Village of Shamkhor District, Northern Artsakh (now within Azerbaijan). Later, in May 1991, the village also provided home for the Armenians deported from Getashen Village of Northern Artsakh. In August 1992 the Armenians of

4 **Vorsord**, "Anarchy Continues," *Mshak*, no. 194, 14 September 1917, p. 3.
5 *Mshak*, no. 21, 30 January 1918, p. 2.

վեցի, գանձակեցի և դաշքեսանցի մի քանի տուն հայեր[6]:

Գյուղի բնակչության թվաքանակն արտացոլող վիճակագրական տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Artzvashen took up residence here together with several Armenian families from Baku, Gandzak and Dashkesan.[6]

Below follow the available statistical data regarding the number of the population of Aghberk:

տարեթիվ-year	հայ-Armenian		թյուրք-Turkic		ընդամենը-total	
	տուն-houses	շնչ.-inhabitants	տուն-houses	շնչ.-inhabitants	տուն-houses	շնչ.-inhabitants
1831[7]				136		136
1840-ական[8]			20		20	
1873[9]				422		422
1886[10]				575		575
1908[11]				940		940
1914[12]				1134		1134
1916[13]				1113		1113
1919[14]				1329		1329
1922[15]				1053		1053
1926[16]				1229		1229
1931[17]				1392		1392
1939[18]				1504		1504
1959[19]				1141		1141
1970[20]				1563		1563
1989[21]						688
2001[22]		298				298
2004[23]		209				209
2008[24]		249				249
2019[25]	60				60	261

6 Տեղեկությունները մեզ է փոխանցել գյուղի պատմության ուսուցիչ Պետրոս Մկրտումյանը:

7 Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 годы, статистический сборник, сост. **А. Манвелян**, **Г. Мартиросян**, Ереван, 1962, с. 87 (այսուհետ՝ Населенные пункты и население..., համապատասխան էջերով):

8 **Շահխաթունեանց Շահրիարցոյ** միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 257: Թուրքաբնակ է հիշվում նաև 1863 թ. (**Սմբատեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 631, 636):

9 Населенные пункты и население..., с. 87.

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

16 ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 166:

17 Населенные пункты и население..., с. 87.

18-19 Նշվ. աշխ., էջ 39:

20 ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 166:

21-23 Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 14:

24 https://www.armstat.am/file/article/marz_08_36.pdf

25 Ըստ տեղում կատարված հարցումների:

6 This information was provided by the history teacher of Aghberk, Petros Mkrtumian.

7 The Residences and Population of the Armenian SSR between 1831 and 1959: collection of statistical data compiled by **A. Manvelian, G. Martirossian (Yerevan**, 1962), p. 87.

8 **Shahkhatuniants Shahriartsy**, a Monk of Holy Echmiatzin, vol. 2 (Echmiatzin, 1842), p. 257. The village was also mentioned as inhabited by Turks in 1863 (**Smbatiants**, "Topography of Tzovazard District of Gegharkunik," pp. 631, 636).

9 The Residences and Population of the Armenian SSR, p. 87.

10 Ibid.

11 Ibid.

12 Ibid.

13 Ibid.

14 Ibid.

15 Ibid.

16 Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories, vol. 1, p. 166.

17 The Residences and Population of the Armenian SSR, p. 87.

18-19 Ibid., p. 39.

20 Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories, vol. 1, p. 166.

21-23 Dictionary of Armenian Residences, p. 14.

24 https://www.armstat.am/file/article/marz_08_36.pdf

25 According to the inquiries made in the village.

ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
THE HISTORICAL MONUMENTS OF THE VILLAGE



Աղբերք գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2017 թ.) արբանյակային լուսանկարի (գրաֆիկական մշակումը՝ Ա. Հակոբյանի, 2019 թ.)

The general layout of Aghberk Village based on a Google Earth photograph of 2017 (graphical work by A. Hakobian, 2019)

Ստորև ներկայացնում ենք Աղբերք գյուղի պատմական հուշարձանները[26].

Հայկական գերեզմանոց. գյուղի հյուսիս-արևելյան եզրին (կենտրոնից արևելք) պահպանվում են հիմնահատակ ոչնչացված հայկական գերեզմանոցի (N 40º 31.878′; E 045º 16.759′, ծ.մ. 2178 մ) վերջին մնացորդները՝ ԺԷ-ԺԸ դարերին բնորոշ անմշակ, անարձանագիր խոշոր սալատապաններ: Գյուղաբնակները հայտնեցին, որ 1988 թ. դրությամբ նշված հատվածը թուրքերը գործածում էին որպես ցանքատարածք (սալատապանները կուտակել են եզրերին, իսկ խաչքարերը՝ համատարած յուրացրել և օգտագործել որպես շինանյութ):

26 ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում հաշվառված չեն:

Below we are presenting the historical monuments of Aghberk Village[26]:

Armenian Cemetery. The last remnants of the destroyed Armenian cemetery (N 40º 31.878′; E 045º 16.759′, 2,178 metres above sea level) of Aghberk, rough, uninscribed slabstones of the 17th to 18th centuries, are preserved at the north-eastern edge of the village, east of its centre. As the locals told us, in 1988 the Turks used this area for agricultural purposes: the slabstones had been moved to the edges of the cemetery, while the cross-stones were appropriated as building material.

26 These monuments are not on the List of the Immovable Monuments of History and Culture of the Republic of Armenia.

Ավերված հայկական գերեզմանոցը հարավից (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)

The destroyed Armenian cemetery from the south (photo by R. Kortoshian, 2019)

Գերեզմանոցի եզրերին կուտակված սալատապաններ (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)

Slabstones moved to the edges of the cemetery (photo by R. Kortoshian, 2019)

Վերջին տարիներին կատարված տարաբնույթ աշխատանքների ժամանակ տեղաբնակ հայերը հայտնաբերել են տների և գոմերի որմերում օգտագործված 5 (2-ը՝ արձանագիր) միավոր խաչքար կամ խաչքարի բեկոր: Ըստ ոճական առանձնահատկությունների՝ բոլորն էլ թվագրվում են ԺԷ-ԺԸ դարերով:

In recent years, in the course of construction activities, a wholly-preserved cross-stone and the fragments of 4 others have been found in the walls of the local houses and cattle-sheds (the cross-stone and one of the fragments are inscribed). Judging from their stylistic peculiarities, all of them trace back to the 17th to 18th centuries.



Խաչը քերելուց հետո տներից մեկի որմին որպես անկյունաքար գործածված խաչքար (լուս. և գրչ.՝ Ռ. Քորթոշյանի, 2009 և 2019 թթ.), որն այժմ տեսանելի չէ (պատը սվաղվել է):

A cross-stone that was used as a cornerstone in the wall of a local house after the cross had been scraped away (photos and tracing by R. Kortoshian, 2019)

Շենքերի որմերից հայտնաբերված խաչքարերի բեկորներ (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)
Cross-stone fragments found in the walls of some buildings (photos by R. Kortoshian, 2019)

Ամբողջական միակ խաչքարի և բեկորի արձանագրություններն են.

ա *Ս(ու)րբ խ(աչս) [փ](րկ)ութե(ան) հո|գում Փիլէկին:*

բ *... զխաչս ... | ...ար...:*

1988 թ. հետո հայկական նոր գերեզմանոց է գոյացել գյուղից մոտ 150 մ արևմուտք:

Below follow the inscriptions engraved on the aforementioned cross-stone and fragment:

1 *This Holy Cross is for the salvation of Pilek's soul.*

2 *... this cross...*

After 1988 a new Armenian cemetery was formed about 150 metres west of the village.

Որպես շինանյութ գործածված խաչքարի բեկոր (լուս. և գրչ.՝ Ռ. Քորթոշյանի, 2009 թ.), որը 2010 թ.-ից հետո անհետացել է:
A cross-stone fragment used as building material (photo and tracing by R. Kortoshian, 2009): lost since 2010

Ավերված շենքերից մեկի հիմքից հայտնաբերված խաչքար (լուս. և գրչ.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)
A cross-stone found in the foundations of a destroyed building (photo and tracing by R. Kortoshian, 2019)

Թյուրքական գերեզմանոց. գյուղի հյուսիս-արևմտյան եզրին միանգամայն անվնաս պահպանվում է թյուրքական հին գերեզմանոցը (N 40° 31.993″; E 045° 16.515″, ծ. մ. 2161 մ): Տեղում առկա ուղղահայաց կանգնեցված գերեզմանաքարերը հիմնականում անմշակ են և անարձանագիր: Կան նաև արաբերեն արձանագրություններով երկու տասնյակ շիրմաքարեր, որոնց եզրային թվերն են՝ 1896-1934:

Ստորև ներկայացնում ենք առավել վաղ թվագրությամբ մի քանի տապանագրեր և դրանց թարգմանությունները.

1.

Թարգմ. 1314 (1896-1897 թթ.): Այս է հանգիստ ...ի որդի՝ հանգուցյալ քարբալայի Զայն Ալ Աբիդինի:

2.

Թարգմ. 1317 (1899-1900 թթ.): Այս է հանգիստ ներված հանգուցյալ ...:

Turkic Cemetery. An old Turkic cemetery (N 40° 31.993″; E 045° 16.515″; 2,161 metres above sea level) is preserved intact at the north-western extremity of Aghberk. It mostly has vertically-placed rough tombstones without any epitaphs. There are also twenty gravestones with Arabic epitaphs dating from the period between 1896 and 1934.

Below follow some of the oldest epitaphs of this cemetery:

١٣١٤. / هذا مرقد / المرحوم / كربلائي زا ين العا/بدين ولد / ...

Transl.: 1314 (1896-1897). Here lies ...'s son, the late Karbala Zayn Al Abidini.

١٣١٧. / هذا / منام مرقد / مرحوم المغفورة / ...

Transl.: 1317 (1899-1900). Here lies the late ... who has been forgiven.

Հատված թյուրքական գերեզմանոցից (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)

Partial view of the Turkic cemetery (photo by R. Kortoshian, 2019)

3.

١٣١٧. / هذا مرقد / المرحومة المغفو/ر بشرى بنت / كربلائي / حسين.

Թարգմ. 1317 (1899-1900 թթ.): Այս է հանգիստ քարբալայի Հուսեյնի դուստր՝ ներված հանգուցյալ Բուշրայի:

Transl.: 1317 (1899-1900). Here lies Karbala Husein's daughter, the late Bushra, who has been forgiven.

4.

سنة ١٣١٨. / هذا مرقد / المرحوم المغفورة / كربلائي حسين / ...

Թարգմ. թվին 1318 (1900-1901 թթ.): Այս է հանգիստ ներված հանգուցյալ քարբալայի Հուսեյնի ...:

Transl.: In 1318 (1900-1901). Here lies the late Karbala Husein's ... who has been forgiven.



Թյուրքական գերեզմանոցի հնագույն թվակիր (1896-1897) քարը (լուս. և գրչ.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)

The oldest dated tombstone (1896-1897) of the Turkic cemetery (photo and tracing by R. Kortoshian, 2019)

Արաբերեն արձանագրությամբ թյուրքական գերեզմանաքարերի նկարներն ըստ վերծանությունների (№ 2-5) հաջորդականության (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)

The Turkic tombstones with Arabic epitaphs presented in the order of their decipherments (nos. 2-5): photos by R. Kortoshian, 2019)

5.

١٣١٩. / هذا مرقد / المرحوم /المغفورة / طاد/ف ابن / بكر...

Թարգմ. 1319 (1901-1902 թթ.): Այս է հանգիստ Բաք...ի որդի՝ ներված հանգուցյալ Թադեֆի:

Transl.: 1319 (1901-1902). Here lies Bak...'s son, the late Tadef, who has been forgiven.

Արաբերեն արձանագրությամբ թյուրքական գերեզմանաքարերի նկարներն ըստ վերծանությունների (№ 6-8) հաջորդականության (լուս.՝ Ռ. Քորքոշյանի, 2019 թ.)

The Turkic tombstones with Arabic epitaphs presented in the order of their decipherments (nos. 6-8): photos by R. Kortoshian, 2019

6.

١٣٢٠. / هذا مر/قد المرحوم/ مصطفا / بن ول...

Թարգմ. 1320 (1902-1903 թթ.): Այս է հանգիստ Վալ...ի որդի՝ հանգուցյալ Մուսթաֆայի:

Transl.: 1320 (1902-1903). Here lies Val...'s son, the late Mustafa.

7.

١٣٢٦. / هذا مرقد مر/حومة المغفورة/ تگذبان بنت / على.

Թարգմ. 1326 (1908 թ.): Այս է հանգիստ Ալիի դուստր՝ ներված հանգուցյալ Թակզիբանի:

Transl.: 1326 (1908). Here lies Ali's daughter, the late Takziban, who has been forgiven.

8.

الله، محمد، على، / فطمة، حسن، حسين. / ١٣٢٨. / هذا مرحوم / المغفور / على بن / حسين.

Թարգմ. Ալլահ, Մուհամմեդ, Ալի, Ֆաթմա, Հասան, Հյուսեին: 1328 (1910 թ.): Այս է հանգիստ Հյուսեինի որդի՝ ներված հանգուցյալ Ալիի:

Transl.: Allah, Muhammed, Ali, Fatma, Hasan, Hyusein. 1328 (1910). Here lies Hyusein's son, the late Ali, who has been forgiven.

1930-ական թվականների երկրորդ կեսին ադրբեջանական գերեզմանոց է գոյացել գյուղից մոտ 100 մ հարավ-արևմուտք: Գերեզմանաքարերը հիմնականում ունեն ռուսատառ ադրբեջաներեն (հնագույնները՝ նաև արաբերեն) արձանագրություններ: Գերեզմանաքարերի եզրային թվերն են՝ 1939-1987:

In the second half of the 1930s, an Azerbaijanian cemetery was formed about 100 metres south-west of the village. The tombstones are mostly engraved with Azerbaijanian epitaphs in Russian script, the oldest ones also having Arabic inscriptions. These gravestones can be traced back to the period between 1939 and 1987.

Գյուղատեղին հյուսիս-արևելքից, տների հիմքեր, ուշմիջնադարյան խեցեղեն և սանդղավանդներ (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)

The village site from the north-east; house foundations; late medieval pottery and the terraces (photos by R. Kortoshian, 2019)

Գյուղատեղի. գտնվում է Աղբերքից 1,5 կմ արևելք (N 40°31′33.79″; E 045°15′36.99″) և փռված է գրեթե ցամաքած մի աղբյուրի հարևանությամբ:

Ամենայն հավանականությամբ, մինչև ԺԷ-ԺԸ դդ. հայաբնակ գյուղը հետագայում երբևէ չի բնակեցվել:

Գյուղատեղիի տարածքում պահպանվում են մոտ մեկ տասնյակ զանազան շինությունների հետքեր (տնատեղեր և տների հիմքեր):

Ողջ մակերեսին առկա է ուշմիջնադարյան խեցեղեն, իսկ գյուղատեղիից արևելք նշմարվում են հողագործ բնակիչների կառուցած սանդղավանդներ:

Village Site. This village site is located 1.5 km east of Aghberk (N 40°31′33.79″; E 045°15′36.99″), in the vicinity of a spring that has almost dried up.

Populated by Armenians until the 17th to 18th centuries, the village most probably did not see any other inhabitants afterwards.

The village site preserves the remnants of about 10 buildings (house sites and foundations). It also abounds in pieces of pottery of the late Middle Ages. To the east, the terraces once built by the local farmers can still be discerned.

«ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՀԱՎԱՔ» ԾՐԱԳԻՐՆ ԱՂԲԵՐՔՈՒՄ
COLLECTION OF DISPLACED CROSS-STONES PROJECT IN AGHBERK

Կառուցված խաչքարերի պուրակը (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2019 թ.)
The park of cross-stones (photo by R. Kortoshian, 2019)

Նշյալ ծրագիրն առաջին անգամ իրականացվում է Աղբերք գյուղում (մինչև 1988 թ.՝ ադրբեջանաբնակ), որի շրջանակներում հիմնվել է խաչքարերի պուրակ՝ հնարավորություն տալով այժմյան հայ բնակիչներին հավաքելու այն խաչքարերի բեկորները, որոնք հայտնաբերվում են գյուղի տարբեր շինությունների որմերում և հիմքերում: Հուշարձանների մնացորդների՝ մի վայրում հավաքելու հիմնական նպատակն է ապահովել դրանց անխաթար և երկարաժամկետ գոյությունը:

Հայտնի է, որ տեղաբնակները վերջին տարիներին հայտնաբերել են որպես շինանյութ գործածված 5 հուշարձան (խաչքար և խաչքարի բեկոր): Դրանցից 4-ն ավելի ուշ տեղափոխվել են տարբեր վայրեր (նոր գերեզմանոց, գյուղի կենտրոն, տներից մեկի բակ, մեկն էլ 2010 թ.-ից հետո անհետացել է), իսկ 1-ը գտնվում է տներից մեկի որմին (2013 թ. սվաղվել է և այժմ տեսանելի չէ): Այսպիսով՝ պուրակում դեռևս զետեղվել է 3 խաչքարի բեկոր: Հետագա տարիներին դրանք բնականաբար կարող են ավելանալ:

Within this project, first implemented in the village of Aghberk (populated by Azerbaijanians until 1988), a park of cross-stones has been founded to be later enriched with new cross-stone fragments that will possibly be found in the walls and foundations of various local buildings. The aim of collecting these fragments in one place is to secure their intact preservation.

In recent years, the inhabitants of Aghberk have found 5 monuments (a cross-stone and the fragments of four others) that were once used as building material. Later the cross-stone was set into the wall of a local house and has been hidden behind a layer of plaster since 2013. As for the fragments, one of them has disappeared since 2010, while the other three were taken to the new graveyard of Aghberk, to the village centre, and to a local yard. Now these fragments are in the newly-founded park of Aghberk, where, indeed, the number of such monuments can increase in the future.

A memorial plate has been placed in the park with the following text: "*The historical Armenian*

Հատված խաչքարերի պուրակից (լուս.՝ Ռ. Քորքոշյանի, 2019 թ.)
Partial view of the park of cross-stones (photo by R. Kortoshian, 2019)

Պուրակում տեղադրվել է հուշատախտակ՝ հետևյալ գրությամբ. «Աղբերք գյուղի հայկական պատմական գերեզմանոցն ավերվել էր եկվոր ադրբեջանցիների կողմից, իսկ խաչքարերը, որպես շինանյութ, գործածվել նրանց տների և գոմերի որմերում: 1988 թ. հետո գյուղում վերաբնակված հայերի ջանքերով խաչքարերը 2019 թ. հավաքվեցին այս պուրակում՝ ի հարգանս նախնյաց»:

Նկատի ունենալով նաև այն, որ տարբեր վայրերում ընկած խաչքարերի վրա կատարվում է մոմավառություն (վնասելով դրանք), տեղադրվել է նաև մոմակալ (հուսով ենք, որ այն զերծ կպահի այդ տգեղ սովորությունից, և պուրակը կվերածվի յուրատեսակ մի սրբատեղիի):

Համաձայն ծրագրի՝ Աղբերքի դպրոցում դասախոսությունների ժամանակ տեղեկություններ են փոխանցվել գյուղում պահպանված հայկական և մահմեդական հուշարձանների վերաբերյալ՝ ընդգծելով դրանց պահպանման կարևորությունը:

Ծրագրի ավարտին հրատարակվել է նաև այս գրքույկը և բաժանվել գյուղաբնակներին:

cemetery of Aghberk Village was destroyed by the Azerbaijanian newcomers, who used its cross-stones as building material in the walls of their houses and cattle-sheds. The Armenians who resettled in this village after 1988 gathered the cross-stones in this garden in 2019 in token of respect for their ancestors."

Common people have the habit of lighting candles on cross-stones, which is a great damage to these monuments. For this reason, we have placed a candle stand in the park, hoping that it will help get rid of this bad habit. We also hope that in the course of time, the park will turn into a sacred site.

Within the project, a number of lectures were held in the school of Aghberk, during which the audience received some information about the Armenian and Islamic monuments preserved in the village. The importance of the preservation of these monuments was emphasized.

Also, within the project, this booklet has been published and distributed among the people of Aghberk.

Դրվագներ ծրագրի շրջանակներում կատարված պուրակի շինարարական աշխատանքներից և դպրոցում ներկայացված տեսադասախոսությունից

Construction activities in the park; a lecture in the village school that was accompanied with videos

Ծրագրի իրականացմանն աջակցելու համար
շնորհակալություն ենք հայտնում
Շողակաթի համայնքապետ **Սուլիկո Շուշանյանին**,
Աղբերք գյուղի դպրոցի տնօրեն **Անահիտ Ղալեչյանին**,
պատմության ուսուցիչ **Պետրոս Մկրտումյանին**,
աշխղեկ **Հովհաննես Հովհաննիսյանին**,
դարբին **Անդրանիկ Սարիբեկյանին:**

We would like to offer our special thanks to:
Suliko Shushanian, the governor of Shoghakat community;
Anahit Ghalechian, the headmistress of the school of Aghberk;
Petros Mkrtumian, the history teacher of the local school;
Andranik Saribekian, the blacksmith;
Hovhannes Hovhannissian, the construction foreman,
for their contribution to this project.

«Տեղահանված խաչքարերի հավաք»
ծրագիր

Նպատակն է տեղահանված խաչքարերի համար նախատեսված պուրակներ հիմնել Հայաստանի և Արցախի Հանրապետությունների նախկին ադրբեջանաբնակ այն գյուղերում, որտեղ վերջիններս ոչնչացրել են հայկական միջնադարյան գերեզմանոցները, իսկ հուշարձանները որպես շինանյութ, գործածել տարբեր կառույցների որմերում և հիմքերում:
Այս պուրակների ստեղծումով հնարավորություն է տրվում գյուղերի այժմյան հայ բնակիչներին հայտնաբերված տեղահան հուշարձանները պահպանման նպատակով հավաքելու մի վայրում:
Առաջին անգամ Աղբերքում իրականացված այս ծրագիրը, հուսով ենք, հետագայում կարող ենք շարունակել նույն կարգավիճակ ունեցող այլ գյուղերում:

Collection of Displaced Cross-Stones
Project

The aim of this project is to found parks of displaced cross-stones in those villages of the Republics of Armenia and Artsakh where the former Azerbaijanian inhabitants have destroyed the medieval Armenian cemeteries, using the tombstones and cross-stones as building material.
Thanks to the foundation of such parks, the present-day Armenian inhabitants of these villages will be able to gather all the displaced monuments in one place, which will facilitate their preservation.
We hope that this project, implemented for the first time in Aghberk Village, will also be carried out in other similar villages.

Ծրագիրն իրականացվել է
«Դեպի Հայք»
հիմնադրամի հովանավորությամբ

The project has been carried out
with the financial assistance of
Depi Hayk Foundation

Գրքույկի նախահրատարակչական
աշխատանքները կատարվել են
ՀՃՈՒ հիմնադրամի օժանդակությամբ

The booklet has been prepared
with the support of
RAA Foundation

ISBN 978-9939-843-47-6

«Էյ Ջի տպարան»
«AG print»

ԵՐԵՎԱՆ
YEREVAN

2019